



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բարձրագոյն Գեղարքայի Վեհապետ

Թիֆ 63

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՐԻՈՒՄԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Ա. Ա. Ա. Ա.

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԱՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԷՆ

ՆԻՍ ԿԱՔՍՈՒՆԵՐԵԲԵՐՈՐԳ

6 ՅՈՒԼԻՍ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Ե. ՄԻԿԷԼՅԱՆ

— 1873 —

ՔՆՊԷԱՆՍԻՐ ԺՍՂԱՅ

ԲԵՅՈՒՄ 1870 ԵՄԻՆ

ՆԻՍ ԿԳ.

Յ ԵՈՒՂԻՍ 1878

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ (Ա. Ատենայեա)

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ

1. Վաւերացում նախորդ կԲ. նիստի ատենագրութեան :
2. Վաւերացում նորընտիր Երեսփոխանաց :
3. Համեմատական քուէարկութիւն ընտրութեան անդամոց զիւանին Ընդհանուր ժողովոյ :
4. Ատենական կանոնադրութիւն :
5. Հրածարում Քաղ. ժողովոյ 4 Անդամոց :

— 101 —

Ժամը 9 ին քառորդ մնացած մեծագոյն մաս կազմուելով, Ատենը բացուեցաւ, եւ նետղհեաէ քանի մը Երեսփոխաններ եւս գալով ներկայութեան վերջին թիւը 55 ի յանդեցաւ :

ՎԱԻԲԱՅՈՒՄ ՆԱԽՐՆԹԱՅ ԿԲ. ՆՍՏԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ.

ԿԲ. Նստի ատենագրութիւնը քուէի զըրուելով ընդունուեցաւ առանց իրիք զիտողութեան :

ՎԱԻԲԱՅՈՒՄ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ընտրութեանց Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ զիւանին հասած երկու տեղեկա-

զրերը կարգացուեցան, որոց պատճէններն ահաւասիկ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհանուր ժողովոյ

Պալատու թաղին հրատարեալ Երեսփոխան տօքթէօր Ռաֆայէլեան էֆ. ին տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով 25 ընտրողաց մասնակցութեամբը և բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուած է

Մկրտիչ էֆ. Եսայեան :

Գաղատիոյ վիճակին առժամանակեայ Ընդհանուր ժողովը Երեսփոխան ընտրած է բացարձակ առաւելութեամբ

Յակոբ էֆ. Տօնէլեան

Սամաթիոյ Եկեղեցւոց Թաղին հրա-
ժարեալ երեսօխան Քիւրճեան Սեօուհ
էֆ. ին տեղ նորոգ ընտրութիւն կատարուե-
լով, 70 ընտրողներէն 32 ին մասնակցութեամ-
բը և բացարձակ առաւելութեամբ երեսօխան
ընտրուած է

Օգոստէն էֆ. Խօճասարեան :

Կարնոյ Գաւառական Ընդհանուր ժողովը
հրաժարեալ երեսօխան Մակարեան Յակոբ
էֆ. ի տեղ, բացարձակ առաւելութեամբ
քուէից ընտրած է

Կարապետ էֆ. Փանոսեան :

Ատանայի Գաւառական Ընդհանուր ժո-
ղովը երեսօխան ընտրած է

Արմանիկ էֆ. Նորատունկեան :

Սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը
հաստատելով, պատկանելի ժողովոյց կը ներ-
կայացընեմք ՚ի վաւերացումն :

Ի դիմաց Գործ. Յանձ.

Փ. Ատենադպիր Ատենապետ

Ք. Ղազարոսեան Ս. Պ. Պ. Փափաղեան

22 Յունիս 1873

Ղալաթիա

ՏԵՂԵԿԱԳԻՐ Բ.

Ամենապատիւ Արքայան Հայր

Նախագահ Ազգ. երեսօ. ժողովոյ

Մայր եկեղեցւոյ և միացեալ թաղից եր-
կու հրաժարեալ երեսօխանաց Վստիմապա-
տիւ Յակոբ Ալէի Պալեան և Ասիանեան Յակոբ
էֆէնտի տեղ, նորոգ ընտրութիւն կատար-
ուելով, 1211 ընտրողներէն միայն 125 ին մաս-
նակցութեամբ երեսօխան ընտրուեցան

Բացարձակ առաւելութեամբ

Գրիգոր էֆ. Արապեան

Համեմատական առաւելութեամբ

Պետրոս էֆ. Քերէստէճեան

Սոյն ընտրութեան օրինաւորութիւնը
հաստատելով, Պատկանելի ժողովոյց կը
ներկայացընեմք ՚ի վաւերացումն :

Ի դիմաց Գործ. Յանձնատեղովոյ

Փ. Ատենադպիր Ատենապետ

Ք. Ղազարոսեան Ս. Պ. Պ. Փափաղեան

6 Յունիս 1873

Ի Ղալաթիա

Սոյն տեղեկագրերը քուէի գրուելով կա-
տարուած ընտրութիւնները վաւերացան :

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՔ 2 ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ատենապետ էֆէնտի մէկ քանի երեսօ-
խանաց տկարութեան պատճառաւ այսօրուան
նիստէն բացակայ մնալու հարկադրուած ըլլա-
լուն համար նամակ զրկած ըլլալին ծանուցա-
նելէ ետեւ, երկու երեսօխանաց, այն է Ա-
բէլ Կիւլպէիեան և Քերոյիէ Աղեքսանդրեան
էֆէնտիներուն հրաժարագիրը ժողովին ներ-
կայացուց, որք կարգացուեցան :

Աւասիկ պատճէնները .

Շնորհազարդ Տէր

2 Յունիս ամսաթուով մէկ շնորհ-
նիդ ստացայ, որով՝ Ընդհանուր ժողովոյ՝ հը-
րաժարականիս նկատմամբ ունեցած նկատու-
ղութեանը համար իմ արամադրութեանս գի-
մելու պատիւն ըրած էք :

Այս մասին իմ շնորհակալութիւնս յայտ-
նելէս ետեւ կը ցաւ իմ նորոգել իմ հրաժարու-
կանս, որովհետեւ ինչպէս որ Հայերէն չեմ
կրնար խօսիլ, այնպէս ալ, գատողութիւն ը-
նելու համար ըստ բաւականի չեմ կրնար հաս-
կընալ :

Մնամ ձերումդ Արքայանութեան

Կօստանդնուպոլիս Խոնարհ ծառայ

4 Յունիս 1873

Աբէլ Կիւլպէիեան

Ամենապատիւ և Ահհափառ Ս. Հայր

Չերդ Արքայանութեան 20 Յունիս
թուեալ նամակն երկու օրով յառաջ ընդու-
նելու պատիւն ունեցայ, որով անցեալ ուր-
բաթ օրուան գումարուած Ընդհանուր ժող-
ովին ներկայ գանուելու կ'իմացնէիք :

Ինչպէս որ ամէն անհատի պարտաւորու-
թիւնն է իւր ազգին ծառայել, նոյնպէս և
ես պարտ անձին համարած էի հայրենեաց և
ազգիս հոգւով ծառայել, սակայն անձնական
տկարութիւնս արդէլք ըլլալով ստիպեց յա-
կամայիցս հրաժարիլ ազգելով միանգամայն
ընդունիլ որով մնամ միշտ Չերդ Արքայանու-
թեան

24 Յունիս 1873

Խոնարհ, ծառայ

Խսկիւտար

Ք. Պ. Աղբապարտեան

Սոյն հրաժարականաց վրայ գիտողութիւն
ընող չըլլալով, Ատենապետ էֆ. խրաբանչիւ-
րը զատ զատ քուէի գրաւ, և ժողովն ընդու-
նեց :

ՀԱՐՑՈՒՄ 5 ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Հինգ երեսօխանաց ստորագրութեամբ
հարցման թուղթ մը առ գիւանն ուղղեալ կար-
գացուեցաւ : Ահաւասիկ պատճէնը .

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն

ԱՌ ԴԻՒԱՆՆ ԱՁԳ. ԵՐԵՍՓՈՒՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա. Ինչո՞ւ համար 70—71 ի վարչութեան
Համարատուութիւնը խնդրոց կարգէն դուրս
ձգուած է :

Բ. Ինչո՞ւ համար նախորդ Քաղաքական
ժողովոյ 71—72 ի Համարատուութեան տեղե-
կագիրը մինչև ցարդ չհաղորդուեցաւ Երես-
փոխանաց :

Պօղոս Հ. Ժամկոչեան թ. Բագրատունի

Յ. Ս. Մարտիկեան Պօղոս Զիւլմալեան

6 Յունիս 1873

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չը կըցի լաւ մը բը-
րանել թէ արդեօք այս հարցումը գիւանին
ուղղակի կը վերաբերի թէ ոչ վարչութեան .
գիւանին պէտք է վերաբերի եթէ վարչութիւ-
նը հաղորդելով այս համարատուութիւնը,
գիւանը զանոնք ժողովին չէ հաղորդած . ապա
թէ ոչ առ վարչութիւնն ուղղեալ հարցում մ'է
և այնպէս ալ պէտք է ըլլայ, վասն զի Երես-
փոխանական ժողովներու մէջ գիւանին այսպէս
կանոնաւոր ու գրաւոր հարցում ուղղելու սո-
վորութիւն չկայ որ ևս գիտնամ : Կը խնդրեմ
որ հարցումն ստորագրող էֆէնտիներն այս կէ-
տը բացատրեն :

ԱՏԱԼԱՐՄԵԱՆ Յ. ԷՖ. — Այս, նախորդ
Քաղաքական ժողովոյ 70—71 ին համարատու-
թեան տեղեկագիրը արուած էր գիւանին և
խնդրոց կարգն անցած, սակայն ժամանակ մը
խնդրոց կարգին մէջ մնալէն ետեւ, գիւանն
ինքնին վերուցած է. միթէ օրինաւոր չէ՞ հարցը-
նել գիւանին թէ ինչո՞ւ վերուց, և կը խնդ-

րեմք որ բացատրութիւնը տալէ ետեւ, զայն
անցունէ նորէն խնդրոց կարգը : Իսկ Բ. ը,
այն է 71—72 ին տեղեկագիրը՝ Երեսօխան
Տիգրան էֆէնտի իրրեւ Ատենադպիր նախորդ
Քաղաքական ժողովոյ, անոր նախարանը ներ-
կայացնելէ և յատենի Ընդհանուր ժողովոյն
կարգալէ ետեւ խոստացաւ բերել. բայց դեռ
չբերաւ, և գիւանն ալ մինչև ցայսօր չըմտ-
սեց նոյն խոստացեալ տեղեկագիրը, ինչպէս
որ սլեպք էր վնասել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը կրկնեմ ևս այս ա-
պագային համար որ ժողովներու մէջ սովորու-
թիւն և իրաւունք եղած հարցումն առ վար-
չութիւնն ուղղեալ հարցումն է. գիւանին հար-
ցում չուղղուիր, զի գիւանն ինչ որ կ'ընէ ժո-
ղովով կ'ընէ և այնպէս պէտք է որ ընէ . գիւ-
անը ժողովէն դուրս իշխանութիւն չէ և ժո-
ղովէն դուրս գործողութեան չըմանակ մը չու-
նի որ հակողութեան պէտք ըլլայ Ընդհանուր
ժողովին կողմէն : Իսկ այդ ձեր յարուցած մաս-
նաւոր խնդրոյն գալով կը խնդրեմ որ Ա. Ա-
տենադպիր էֆէնտիին դալուն սպասէք, որն
որ այսօր բացակայ է ժողովէն . զի ես անտե-
ղեակ եմ և օրուան կարգի խնդիրները յառաջ
քան զհրատարակութիւն տեսած չեմ զրեթէ
քնաւ : Եւ այս երկու պատճառի համար . մէ-
կը՝ զոր ըսի արդէն, զի օրուան կարգը ժող-
ովին մէջ կ'որոշուի ընդհանրապէս, և միւրը՝
զի ևս ժողովին յայտնած եմ արդէն թէ ժող-
ովէն դուրս Ատենապետութեան պաշտօն չեմ
վարեր և ժողովին ալ ամեն անգամ ներկայ
չեմ գանուիր : Պակասութիւն մ'է այս, բայց
ես երկու տարի է կ'ազաչեմ կը պաղատեմ ձե-
զի որ այս պաշտօնն ուրիշի յանձնէք . քանի
անգամ հրաժարեցայ, նորոգ ընտրութիւն ալ և-
զաւ Ատենապետի, բայց հրաժարականներս
չընդունեցիք և զիս նորէն ընտրեցիք . հիմայ
որ նորէն ընտրութիւն կ'ըլլայ, նորէն իմ անունս
կը տեսնեմ համեմատական ընտրութեան մէջ :
Բայց այս անգամ որոշած եմ անպատճառ չըն-
դունիլ, որպէս զի կարենամ իմ երեսօխանի
պաշտօնս վարել և կը յուսամ իրրեւ այն մէկ
քանի ծառայութիւն մատուցանել, Գոհ եմ որ
ձեր հարցումն ինձի առիթ տուաւ ըուէարկու-
թենէն առաջ այս յայտարարութիւնն ընելու .
իսկ հարցման պատասխանը նորէն կը մնայ Ա.
Ատենադպիր էֆէնտիին դալուեան :

Իսկ Պոյաճեանն եւ Հովուեանն էֆէնտինե-
քան հրաժարականին վրայ յառաջ քան գրուեալ
կաթիլնն խնդիր կըլլայ բացատրութիւն ուղի
իրենցնէ եւ իրապէս տեղեկանալ թէ արդեօք
բողոքը կամ ամբաստանութեան մտօք տուած
են այդ հրաժարականը: Եւ որովհետեւ իրենք
իրբու երեսփոխան ներկայ էին արդէն, առա-
ջարկութիւն եղաւ զիւանին հրապարակել զիրենք
որ բացատրեն:

ՄԱՋԱՂՄԵԱՆ Յ. ԷՃ. — Ս. Պատրիարքը
Քառն ժողովոյ ալ նախագահն է. նոյն ժողովոյ
մէջ եղած անհամաձայնութիւնը լաւ գիտէ եւ
կրնայ երկու խօսքով բացատրել զայն. եթէ
ժողովը կընդունի, նորին Սրբազանութիւնը թող
բարեհաճի տալ մեզ պէտք եղած բացատրու-
թիւնը:

Ատենապետ էֆ. Քուէի գնելով այս կէ-
տը, ժողովը կորչէ նոյն իսկ հրաժարելոց կող-
մէ անուղ պէտք եղած բացատրութիւնը: Հե-
տեւապէս Պոյաճեանն եւ Հովուեանն էֆէնտինե-
քը կը հրաւիրուին զիւանէն բացատրութիւն
տալ:

Պոյաճեանն էֆ. խօսք կ'աւանու յանուն
իւր եւ Հովուեանն էֆէնտինի, եւ բացատրու-
թեան թուղթ մը կընթանու:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՃ. — Վերջարանութիւնը
չկրցինք լսել. կաղաչենք զիւանին որ կրկնել
տայ:

(Յուզմունք եւ իրար անցում ժողովին մէջ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Հրաժարող էֆէնտի-
ներուն տուած բացատրութեան կը հասկցուի
որ ինչ ինչ խնդրոց մէջ կարծեաց տարբերու-
թիւն պատահելով իրենք փոքրագոյն մաս մնա-
ցեր են Քաղաքական ժողովոյ մէջ. ուստի եւ
իրենց ներկայութեամբ որ եւ է բարոյական պա-
տասխանատուութեան տակ մնալ չեն ուզեր
Քաղաքական ժողովոյ արարքներուն համար,
այս պատճառաւ հրաժարեր են. եթէ հոս կանկ
առնենք եւ իրենց տուած բացատրութիւնն այս
մտօք հասկընանք, խնդիրը կը վերջանայ եւ
իրենց բողոքն իրբու չեղեալ կը համարուի:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՃ. — Քանի որ իրենց բո-
ղոքը կարգացուեցաւ. որ ամբաստանութիւն-
նն կը պարունակէ իրենց ընկերացը գէժ, պէտք
է որ նկատողութեան անուրի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Ես չեմ կարծեր թէ
ասկէ աւելի հետեւութիւն կրնայ տալ զիւանը
կարգացուած գրոյն, եւ յարուցանել խնդիր մը
որ դժուարութիւններու եւ վեճերու գուռ բա-
նայ. չեմ ուզեր այսպիսի կտակ մը ձգել իմ
յաջորդիս: Երկու հրաժարեալ ժողովականներն
իրենց սկզբանք եւ խղճին գէժ կը համարին
ներկայ պարագայից մէջ եւ այժմու պայման-
ներով մնալ Քաղաքական ժողովոյն մէջ. ազատ
են հրաժարելու, վասն զի ազատ չեն եւ կա-
րող չեն եւ պէտք չէ որ կարող ըլլան մեծա-
գոյն մասին որոշմունքն անգործարելի ընելու:
Դիւանն ասկէ աւելի չուզէր խօսիլ այս նիւ-
թին վրայ եւ թողուլ որ առանց օրինաւոր
կերպով դատաստանուի ներկայանալու հրաժարական
բացատրելու պատճառանօք Ազգային Վարչու-
թիւնը, որուն ամենքս յարգութիւն կը պար-
տինք, դատաստանեն հոս:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՃ. — Ծանր ամբաստանու-
թիւններ կընեն իրենց ընկերակցացը գէժ,
պէտք է որ այս կէտը քննութեան անուրի.
թէ որ յետո կոչոււմ պիտի ընեն, այն ատեն
իրենց բողոքը չկարգացուած պէտք է համար-
ուի եւ խնդիրը վերջանայ: Ապա թէ ոչ ծանր
են այն խօսքերը. զի կըսեն թէ պատասխանա-
տու չենք առաջի Ազատուոյ եւ Ազգին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Դիւանն այդ խօսքերը
չկարգացուած կը համարի, զի անհար եկան
կարգացուեցան հոս. մեզի համար անհամա-
ձայնութեան խնդիր մըն է հրաժարման պատ-
ճառ եւ այս անհամաձայնութիւնը հիմա հոս
դատելու իրաւունք չունինք մենք: Ուրիշ բան
է եթէ հրաժարող էֆէնտինները Քաղաքական
ժողովոյ գէժ իբր ամբաստանող կանգնին: Եթէ
այդ է ըսածնին եւ ուղածնին թող յառաջ
անցնին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՃ. — Ատենապետ
էֆ. տեսակ մը բողոք կամ ամբաստանութիւն
է ըսաւ իրենց հրաժարողոյն համար. պէտք է
որ ամբաստանութիւններ եթէ ունին հաստա-
տեն: Ես չեմ կրնար ըմբռնել թէ ժողովական
մը կամ ժողովի մը փոքրագոյն մասն իր խօսքը
չկրնալ քաղցնելուն կամ մեծագոյն մասին չը-
կրնալ ընդունել տալուն համար իրաւունք ու-
նենայ բողոքելու մեծամասնութեան գէժ: Ոչ
ապաքէն Ընդհանուր ժողովոյն մէջ ալ շատ
անգամ չենք կրցեր մեր կարծիքը քաղցնել

մեծագոյն մասին չընդունելուն համար. միթէ
մենք ալ եյնենք բողոքենք ժողովոյն մեծա-
մասնութեան գէժ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Ոչ որ իրաւունք ունի
մեծամասնութեան գէժ շարժելու, բայց միայն
իրաւունք ունի հրաժարելու երբ իր կարծեաց
կամ խղճմանքին գէժ որոշումներ կըլլան:
Հիմա կը հարցնեմ հրաժարող էֆէնտիններուն թէ
սխալներն ամբաստանել է իրենց ընկերակցը
թէ ոչ:

ՊՕՏԱՃԵԱՆ Յ. ԷՃ. — Ամբաստանութիւն
չունինք. բայց միայն խղճերուս գէժ համա-
րելով կը հրաժարինք Քաղաքական ժողովոյ
պաշտօնէն. մնացածն Ընդհանուր ժողովոյ գիտ-
նալիք բանն է:

ՀՈՎՈՒՆԵԱՆ Ղ. ԷՃ. — Յետո կոչոււմ ը-
նել տալու խօսք եղաւ, այդ չեմ ընդունիր
իմ մասին:

Տ. ԱՄԲԵՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ. — Այդ բացատ-
րութիւնը գո՛ւ չընէր գմեղ, պէտք է որ որոշ
կերպիւ հասկըցնեն իրենց միտքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Պոյաճեանն էֆ. կը
տեսնէք որ իրաւացի արտունջներ կըլլան. շեր
տուած բացատրութիւնը կամ, շատ երկայն էր
կամ շատ կարճ. քօղարկեալ կերպիւ շատ բա-
ներ ըսել ուղեցիք, բայց որոշ ու յայտնի բան
մը չըսիք. եթէ ըստ օրինի բողոք եւ ամբաս-
տանութիւն ընել չէիք ուզէր պէտք չէր որ
այդ թուղթը կերպայիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Պոյաճեանն էֆ. կը
տեսնէք որ իրաւացի արտունջներ կըլլան. շեր
տուած բացատրութիւնը կամ, շատ երկայն էր
կամ շատ կարճ. քօղարկեալ կերպիւ շատ բա-
ներ ըսել ուղեցիք, բայց որոշ ու յայտնի բան
մը չըսիք. եթէ ըստ օրինի բողոք եւ ամբաս-
տանութիւն ընել չէիք ուզէր պէտք չէր որ
այդ թուղթը կերպայիք:

ՊՕՏԱՃԵԱՆ Յ. ԷՃ. — Ժողովին մէջ
գաղտնապահութիւն չկար, շատ բաներ չէի
կրնար խօսիլ, անոր համար հրաժարեցայ:

ՄԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱԼ. — Ընդհանուր ժո-
ղովը պէտք է հասկընայ թէ ամբաստանութեան
կէտեր յայտնի եւ հրապարակաւ յատենի ժո-
ղովոյ չեն կրնար խօսուիլ. ինչպէս որ Պատ-
րիարքի մը վրայ եղած ամբաստանութիւնը
յանձնաժողովով կամ գործնական նիստով օրէնք
է քննել, այսպէս պէտք է ըլլայ վարչութեան
ժողովականաց համար: Ուստի երբ յանձնաժո-
ղով մը կաղմէք, այն ատեն վերապահեալն ալ
դուրս կեցնէ եւ ամեն բան կը խօսուի. ապա
թէ ոչ մի առ մի քննութիւն հոս չկրնար ը-
լալ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՃ. — Բայց նախ պէտք է
որ ամբաստանողի դիրք առնուն, այնուհետեւ
քննութիւն կրնայ ըլլալ. ապա թէ ոչ ի դուր
ամբաստանած կըլլան:

ՓՍՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Եթէ Քաղաքական
ժողովոյ անգամ չըլլայի, այլ միայն երեսփո-
խան, պիտի ըսէի թէ այսպիսի բողոքախառն
հրաժարական մը անմիջապէս քննութեան առ-
նուի եւ այս քննութիւնն որչափ կարելի է
հրապարակաւ ըլլայ. որպէսզի ազգն ալ լսէ
եւ իմանայ: Ազգէն գաղանի պահելու բան մը
չունինք. ժողովն ինք գգալու կամ տեսնելու
է ե՛րբ գաղտնապահութիւն պէտք է ըլլալ.
ապա թէ ոչ ի՞նչ կը նշանակէ ամեն բանի մէջ
գաղտնապահութիւնը: Պոյաճեանն էֆ. Ա. Բ.
եւ Գ. ըսելով բաներ համրեց. պէտք է ատենք
եղելութիւններով բացատրել. չէ՛նէ ի՞նչ ըսել
է գաղտնի են, եւ թէ որ անհիմն ըլլան, ի՞նչ
պատիժ պիտի տաք: Սրբազանն Հայր, զուք
Յանձնաժողով կամ դռնփակ նիստ ըլլայ կը-
սէք. ես ընդհակառակն կուզեմ որ հրապարա-
կաւ ըլլայ քննութիւնը, այս Ընդհանուր ժո-
ղովոյն մէջ ժողովրդեան աչքին առջեւ. ի՞նչ
տարածայնութիւններ են որ կը դառնան, պէտք
է ժողովուրդն ալ լսէ եւ գատէ. ես իբր վար-
չութեան անգամ փառք կը համարիմ ժողովրդ-
եան աչքին առջեւ դատուիլ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՃ. — Երբ Պոյաճեանն էֆ.
եւ իւր ընկերն ամբաստանողի ձեւն առնուն,
այն ատեն ժողովն եթէ ուղէ քննութեան հա-
մար Յանձնաժողով մը կը կազմէ կամ դռնփակ
նիստ կընէ, եւ եթէ ուղէ հրապարակաւ կը
քննէ, Փափազեանն էֆ. հրապարակաւ ըլլան
ուզեց. ըսել է թէ ինք իր գործոց վրայ վստահ
է, սակայն ժողովն իրեն կը վերապահէ զայդ,
եւ եթէ իմ կարծիքս հարցուի, այժմէն կըսեմ
որ հրապարակաւ չըլլայ քննութիւնը. վասն զի
կարելի է որ ամբաստանողք այնպիսի դաղա-
նիքներ ունին՝ զորս հրապարակաւ չեն ուզեր
յայտնել: Ուրեմն հարցուի իրենց թէ ամբաս-
տանողի դիրք պիտի առնու՞ն. եթէ չեն առ-
նուր, ա՛ռ ոչինչ կը համարիմ իրենց տուած
բացատրութիւնները:

ՓՍՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Երեսփոխան մը
կարող է ամբաստանել, բայց պէտք է ամբաս-
տանադիր մը ներկայացնէ, որպէսզի կարելի
լինի Յանձնաժողով կարգել. ապա թէ ոչ այն-

պիտի մութ կերպով՝ գաղտնիքներ կան ըսելով՝
ամեն անգամ Յանձնաժողով չկրնար գրուիլ :

8. ԱՄԲՐՈՍԻՈՅ ՎԱՐԴ. — Կը կրկնեմ որ
արդէն տրուած բացատրութիւնք գո՛ւ չկրցին
ընել զմեզ . պէտք է լիակատար բացատրութիւն
տան , կամ թէ ինչպէս որ Պէկեան էՔ . առա-
ջարկեց , պէտք է որ ամբաստանչի կերպարանք
առնուն կամ թէ ոչ յետս կոչոււմ ընեն :

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ . — Որովհետեւ խօսքն ու
վիճարանութիւնն երկարեցաւ , ներեցէք ինձ
առաջարկութիւն մ'ընել որ թերեւս միայնէ
ամեն տարածայն կարծիքները : — Քաղաքական
ժողովը դատաստանի աակ ձգելը թեթեւ քան
պէտք չէ համարիլ . ազգային իշխանութիւնը
Քաղաքական ժողովին վրայ կեդրոնացած է
Սրբազան Պատրիարքը մէկտեղ առնելով . ամեն
տեսակ բողոքի համար զայն դատաստանի են-
թարկելն Ազգային իշխանութեան արժանա-
պատուութեանը եւ հեղինակութեան ամբող-
ջութեանը վնասել է : Ընդհանուր ժողովին
պարտքն է նախանձախնդիր ըլլալ իրմէ բղիտեալ
ազգային իշխանութեան պատուոյն , որոյ յազ-
թող նախանձախնդրութիւն իրաւանց եւ ազ-
գին օգտին նախանձախնդրութիւնը պէտք է
ըլլայ : Կառավարիւմ որ Յանձնաժողով մը գըր-
ուի չէ թէ դատելու համար , այլ նախ քննելու
համար թէ պէտք է դատել . այդ Յանձնաժո-
ղովը հրաժարող էՔէնտիններէն նախ կը հարցնէ
եւ կը հրաւիրէ որ ճշդեն իրենց ամբաստանու-
թիւնները . ի քնին կառնու . անոնց ծանրու-
թիւնը եւ թէ ո՞ր աստիճան չուշադրութեան
արժանի են , եւ ըստ այնմ կը տեղեկագրէ Ընդ-
հանուր ժողովին՝ որ եթէ տեղեկագրին եզրա-
կացութիւնն ամբաստանութեան ընդունելու-
թիւնն ըլլայ . կորուչէ թէ ի՞նչ կերպով պիտի
ընէ դատաստանը , Յանձնաժողովոյ ձեռք թէ
յատենի Ընդհանուր ժողովոյ , եւ այն հրապա-
րակա՞ւ թէ գործնական :


ՊՅԱՆԱՍԵՆ Յ . ԷՅ . — Մենք դժտութիւն
հանելու փախաք չունինք . պատճառը հարցու-
ցիք մեզի եւ մենք ալ բացատրութիւն տուինք :

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ . — Տուած բացատրու-
թիւննիդ ամբաստանութեանք խառն էր : զըժ-
տութիւն հանել չենք ուզեր կրտէք , լա՛ւ է .
բայց ձեր արտասանած բառերն իրրեւ մէյմէկ

առու՛մ ինկան Ընդհանուր ժողովին մէջ : Հիմա
կերպով մը վերջի խօսքովնիդ եւս կառնէք տողի
ըսածներնիդ . այս նպատակաւ բլլալու է որ
կարգացած բացատրութեան գիրքնիդ չյանձ-
նեցիք գիւանին . ըսել է որ իմ առջի ըսած կե-
տիս դարձեալ եկաւ խնդիրը եւ հոն իր լու-
ծումը պիտի գտնէ : կարգացուած թու գթն իր-
րեւ չկարգացուած եւ իրրեւ հոս չեկած հա-
մարուի ըսի : Եւ ա՛նա ոչ ամբաստանութիւն
մնաց , ոչ ալ դիր Ընդհանուր ժողովոյ գիւա-
նին վրայ : Ուրեմն նորէն կը կրկնեմ , չկայ ամ-
բաստանութիւն , եւ այն գիրն՝ որ կարգաց-
ուեցաւ իրրեւ թէ չը կարգացուեցաւ . այսքան
վիճարանութենէն սա միայն կը մնայ հասկըց-
ուած եւ ընդունուած Ընդհանուր ժողովն .
որ անհամաձայնութեան պատճառաւ հրաժա-
րեր են Պոյաճեան եւ Հայուեան էՔէնտինները .
Թէ ի՞նչ են այդ անհամաձայնութեան պատ-
ճառները , մեզի անկ չէ փնտրուել . քանի որ
մեծագոյն մասով կորուչէ Քաղաքական ժողովն
օրինաւորութեան սահմանին մէջ կը գործէ , եւ
իր արարքներուն համար Ընդհանուր ժողովին
առջեւ պատասխանատու է : եւ այս պատաս-
խանատուութիւնն իրապէս ի գործ կը դնէ հա-
մարատուութեան օրը : Ինչիրը վերջացած է .
մանաւանդ թէ խնդիր չը կայ . հրաժարական-
ներն ընդունուած են եւ նոր ընտրութիւնը
կըլլայ առաջիկայ առեանին :

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ կը
հաստատէ Ատենապետ էՔէնտինն խօսքերը .
եւ ատենանը կը գոցուի ժամ 30 ը քստորդ ան-
ցած :

Բ. Երեւադղէ Երեւադէպ
Գ. ՊՅԱՆԱՍԵՆ Գ. Ս. ՕՏԵՐՆ



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿՈՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԼՏՈՒԿԻՆ

Կը ծախուի 'ի Դիւ. անատան Պատրիարքարանի, և կը գտնուի
ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկաները .